ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

N 42 ,, 08 ,, մայիսի 2015թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՎԱՅՔԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության 2015թ. ,,Պետական բյուջեի մասին,, ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի բ/ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ պատերազմի զինված ուժերի և աշխատանքային վետերանների Վայքի խորհրդի 2015թ. մայիսի 6-ի թիվ 184/2073-15 գրությունը՝ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակի օրվա կապակցությամբ ՀՀ պատերազմի զինված ուժերի և աշխատանքային վետերանների Վայքի խորհրդին օգնություն ցուցաբերելու մասին.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Այլ նպաստներ բյուջեից,, հոդվածով նախատեսված ծախսերից ՀՀ պատերազմի զինված ուժերի և աշխատանքային վետերանների Վայքի խորհրդի 6 վետերաններին օգնելու նպատակով հատկացնել 300000 /երեք հարյուր հազար/ դրամ միանվագ օգնություն:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում՝ այն փոխանցելով ,,ՀՀ ՎՏԲ Հայաստան բանկի,, Վայքի մասնաճուղում ՀՀ պատերազմի զինված ուժերի և աշխատանքային վետերանների Վայքի խորհրդի թիվ 16035004683700 հաշվին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ